

1.2.4. Տրանսպորտ

Բեռնափոխադրումներ. 2000թ. հունվար-ապրիլին հանրապետությունում, ըստ բեռնափոխադրումների իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և մասնավոր հատվածի բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, բեռնափոխադրումների ծավալը կազմել է 1267.9 հազ. տոննա, որը 1999թ. հունվար-ապրիլի նկատմամբ նվազել է 16.5 տոկոսով: Բեռնաշրջանառությունը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 847.7 մլն.տոննա-կմ (ներառյալ խողովակաշարային տրանսպորտը) և նախորդ տարվա հունվար-ապրիլի նույն ցուցանիշի նկատմամբ աճել 3.5 տոկոսով:

2000թ. հունվար-ապրիլի բեռնափոխադրումների ընդհանուր ցուցանիշները, տրանսպորտի առանձին տեսակների կտրվածքով

	2000թ. հունվար-ապրիլ	2000թ. հունվար-ապրիլ 1999թ. հունվար-ապրիլի նկատմամբ, տոկոսներով	2000թ. ապրիլ	2000թ. ապրիլ 2000թ. մարտի նկատմամբ, տոկոսներով
Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը, հազ.տոննա այդ բվում	1267.9	83.5	361.8	104.1
Երկաթուղային տրանսպորտով	387.0	98.4	145.7	151.8
որից				
արտահանվել են բեռներ	36.9	57.7	16.9	206.1
ներկրվել են բեռներ	288.1	168.2	97.4	153.4
ներհանրապետական փոխադրումներ	62.0	39.2	31.4	129.2
ավտոտրանսպորտով	496.9	66.8	166.8	122.8
որից				
արտահանվել են բեռներ	12.4	36.3	4.2	123.5
դրանից				
ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով	3.2	35.6	1.6	3.2 անգամ
ներկրվել են բեռներ	63.9	104.1	17.8	96.2
դրանից				
ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով	14.2	78.5	4.2	135,5
ներհանրապետական փոխադրումներ	420.6	64.9	144.8	127.1
օդային տրանսպորտով	3.6	100.0	1.0	100.0
որից				
արտահանվել են բեռներ	1.6	177.8	0.5	125.0
ներկրվել են բեռներ	2.0	74.1	0.5	83.3
խողովակաշարային տրանսպորտով	380.4	100.6	48.3	42.1

Երկաթուղային տրանսպորտ. 2000թ. հունվար-ապրիլին, ըստ հաշվետվությունների տվյալների, ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 1999թ. հունվար-ապրիլի նկատմամբ նվազել է 1.6 տոկոսով: Երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալում հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 74.5 տոկոս (1999թ. հունվար-ապրիլի 43.6 տոկոսի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 9.5 տոկոս (նախորդ տարվա հունվար-ապրիլի 16.2 տոկոսի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 16.0 տոկոս (նախորդ տարվա հունվար-ապրիլի 40.2 տոկոսի դիմաց):

Ըստ բեռների հիմնական տեսակների, 2000թ. հունվար-ապրիլին 1999թ. հունվար-ապրիլի նկատմամբ քիմիական և հանքային պարարտանյութերի փոխադրման ծավալն ավելացել է 2.4 անգամ, հացահատիկինը և աղացվող մթերքներինը՝ 100.3 տոկոսով, քարածխինը 100.0 տոկոսով, իսկ հանքային շինարարական նյութերի փոխադրման ծավալը

նվազել է 81.9 տոկոսով, սև մետաղների ջարդոնինը՝ 80.4 տոկոսով, ցեմենտինը՝ 77.2 տոկոսով, անտարալին բեռներինը՝ 54.5 տոկոսով, սև մետաղներինը՝ 47.1 տոկոսով և նավթ ու նավթամթերքներինը՝ 35.5 տոկոսով:

Երկաթուղային տրանսպորտով փոխադրված բեռների բաժինն ընդհանուր բեռնափոխադրումների ծավալում կազմել է 30.5 տոկոս, նախորդ տարվա հունվար-ապրիլի 25.9 տոկոսի դիմաց: 2000թ. հունվար-ապրիլին ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի բեռնաշրջանառության ցուցանիշը 1999թ. հունվար-ապրիլի նկատմամբ աճել է 30.8 տոկոսով, կազմելով 105.2 մլն. տոննա-կմ: Վազոնների միջին օրական բեռնաթափումը նույն ժամանակաշրջանում կազմել է 44 վազոն և նախորդ տարվա հունվար-ապրիլի նկատմամբ նվազել է 3 միավորով ու կազմել 47 վազոն, իսկ բեռնումը նվազել է 18 միավորով և կազմել 14 վազոն՝ նախորդ տարվա հունվար-ապրիլի 32-ի դիմաց: Նույն ժամանակաշրջանում 4.6 օրով դանդաղել է վազոնապտույտը:

Ավտոմոբիլային տրանսպորտ. 2000թ. հունվար-ապրիլին հանրապետությունում բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումների ծավալը կազմել է 496.9 հազ.տոննա (1999թ. հունվար-ապրիլի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 33.2 տոկոսով), որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 12.9 տոկոս (1999թ. հունվար-ապրիլի 8.3 տոկոսի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 22.2 տոկոս (նախորդ տարվա հունվար-ապրիլի 29.5 տոկոսի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 2.5 տոկոս (նախորդ տարվա հունվար-ապրիլի 4.6 տոկոսի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 25.8 տոկոս (նախորդ տարվա հունվար-ապրիլի 26.3 տոկոսի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 84.3 տոկոս (նախորդ տարվա հունվար-ապրիլի 87.1 տոկոսի դիմաց): 2000թ. հունվար-ապրիլին բեռնաշրջանառությունը կազմել է 10.4 մլն.տոննա-կմ և 1999թ. հունվար-ապրիլի նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 3.4 տոկոսով:

2000թ. հունվար-ապրիլին բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում ավտոտրանսպորտի բաժինը կազմել է 39.2 տոկոս՝ 1999թ. հունվար-ապրիլի 49.0 տոկոսի դիմաց:

Օդային տրանսպորտ. 2000թ. հունվար-ապրիլին, ըստ օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների տվյալների, օդային տրանսպորտով փոխադրված բեռների ծավալը կազմել է 3.6 հազ. տոննա (1999թ. հունվար-ապրիլի նույն ցուցանիշի նկատմամբ մնացել է անփոփոխ), որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 55.6 տոկոս (1999թ. հունվար-ապրիլի 75.0 տոկոսի դիմաց), իսկ հանրապետությունից արտահանված բեռների բաժինը՝ 44.4 տոկոս (1999թ. հունվար-ապրիլի 25.0 տոկոսի դիմաց): Օդային տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը կազմել է 2.3 մլն.տոննա-կմ և նախորդ տարվա հունվար-ապրիլի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 30.3 տոկոսով: Օդային տրանսպորտով փոխադրված բեռների բաժինն ընդհանուր բեռնափոխադրումների ծավալում կազմել է 0.3 տոկոս և նախորդ տարվա հունվար-ապրիլի նույն ցուցանիշի նկատմամբ աճել 0.1 տոկոսով:

Խողովակաշարային տրանսպորտ. 2000թ. հունվար-ապրիլին խողովակաշարային տրանսպորտով հանրապետություն է ներկրվել 380.4 հազ. տոննա բնական գազ և նախորդ տարվա հունվար-ապրիլի նույն ցուցանիշի համեմատ աճել՝ 0.6 տոկոսով, բեռնաշրջանառությունը՝ 0.6 տոկոսով և կազմել 729.8 մլն տոննա-կմ: 2000թ. հունվար-ապրիլին խողովակաշարային տրանսպորտի բաժինը բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում կազմել է 30.0 տոկոս՝ նախորդ տարվա հունվար-ապրիլի 24.9 տոկոսի դիմաց:

Ուղևորափոխադրումներ. 2000թ. հունվար-ապրիլին հանրապետությունում, ըստ ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և մասնավոր հատվածի ուղևորատար ավտոտրանսպորտային միջոց-

ների գործունեության զնահատման, ուղևորափոխադրումների ծավալը կազմել է 46564.9 հազ.մարդ, որը 1999թ. հունվար-ապրիլի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 3.2 տոկոսով: Հաշվետու ժամանակաշրջանում ուղևորաշրջանառությունը կազմել է 659.1 մլն. ուղևոր-կմ և նախորդ տարվա հունվար-ապրիլի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 4.0 տոկոսով:

2000թ. հունվար-ապրիլին ընդհանուր ուղևորափոխադրումների ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2000թ. հունվար-ապրիլ	2000թ. հունվար-ապրիլը 1999թ. հունվար-ապրիլի նկատմամբ, տոկոսներով	2000թ. ապրիլ	2000թ. ապրիլը 2000թ. մարտի նկատմամբ, տոկոսներով
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, հազ. մարդ	46564.9	96.8	10638.8	80.2
<i>այդ թվում՝</i>				
Երկաթուղային տրանսպորտով	203.5	48.1	69.6	166.9
ավտոտրանսպորտով	36785.4	102.0	7894.1	74.9
օդային տրանսպորտով	147.0	90.1	40.4	117.1
Էլեկտրատրանսպորտով	9429.0	82.6	2634.7	99.3

2000թ. հունվար-ապրիլին, ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտով փոխադրված ուղևորների տեսակարար կշիռը կազմել է 0.4 տոկոս (նախորդ տարվա հունվար-ապրիլի համապատասխան ցուցանիշի 0,9 տոկոսի դիմաց), ավտոմոբիլային տրանսպորտինը՝ 79.0 տոկոս, նախորդ տարվա 75.0 տոկոսի դիմաց, օդային տրանսպորտինը՝ 0.3 տոկոս և նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ մնացել անփոփոխ, իսկ էլեկտրատրանսպորտինը՝ 20.3 տոկոս, նախորդ տարվա 23,8 տոկոսի դիմաց:

Երկաթուղային տրանսպորտ. 2000թ. հունվար-ապրիլին, ըստ հաշվետվությունների տվյալների, ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը 2000թ. հունվար-ապրիլի նկատմամբ նվազել է 51.9 տոկոսով, իսկ ուղևորաշրջանառությունը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 9.6 մլն. ուղևոր-կմ, որը նախորդ տարվա հունվար-ապրիլի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 26.2 տոկոսով:

Ավտոմոբիլային տրանսպորտ. 2000թ. հունվար-ապրիլին ուղևորափոխադրումների ծավալը 1999թ. հունվար-ապրիլի նկատմամբ ավելացել է 2.0 տոկոսով, իսկ ուղևորաշրջանառությունը կազմել է 477.5 մլն. ուղևոր-կմ, որը նախորդ տարվա հունվար-ապրիլի նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 2.0 տոկոսով:

Օդային տրանսպորտ. 2000թ. հունվար-ապրիլին, ըստ օդային տրանսպորտով փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների հաշվետվությունների տվյալների, փոխադրվել է 147.0 հազ. մարդ, որի 48.0 տոկոսը (70.6 հազ. մարդ) կազմել է հայաստանյան շարժակազմով իրականացված ուղևորափոխադրումների ծավալը: Հայաստանյան շարժակազմով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալի 0.9 տոկոսը կազմել են չարտերային չվերթներով կատարված ուղևորափոխադրումները (նախորդ տարվա հունվար-ապրիլի 0.5 տոկոսի դիմաց):

Հաշվետու ժամանակաշրջանում օդային տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը կազմել է 132.7 մլն. ուղևոր-կմ և նախորդ տարվա հունվար-ապրիլի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 16.0 տոկոսով:

Էլեկտրատրանսպորտ. 2000թ. հունվար-ապրիլին, ըստ էլեկտրատրանսպորտի կազմակերպությունների հաշվետվությունների տվյալների, էլեկտրատրանսպորտով փոխադրված

ուղևորների թվաքանակը կազմել է 9429.0 հազ.մարդ և 1999թ. հունվար-ապրիլի նկատմամբ նվազել 17.4 տոկոսով, իսկ ուղևորաշրջանառությունը կազմել է 38.9 մլն. ուղևոր-կմ և նախորդ տարվա հունվար-ապրիլի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 17.9 տոկոսով:

Էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունի մետրոպոլիտենով փոխադրված ուղևորների ծավալը, որը 2000թ. հունվար-ապրիլին կազմել է 52.5 տոկոս, իսկ տրոլեյբուսով՝ 29.8, տրամվայով՝ 16.7 և ճոպանուղով՝ 1,0 տոկոս:

Տրանսպորտային պատահարներ. Հանրապետությունում 2000թ. հունվար-ապրիլին, ըստ ՀՀ ՆԳՆ պետավտոտեսչության հաշվետվությունների տվյալների, գրանցվել է շարժակազմի հետ կապված պատահարների 241 դեպք, որն անցած տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 18.3 տոկոսով: Պատահարներից զոհվել է 47 և վիրավորվել 279 մարդ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համապատասխանաբար՝ 72 և 338 մարդու դիմաց: